«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի ռեկտոր,
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

..... **Խ.Ա. Ղազեյան**

«17» հունիսի 2026 թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
Գևորգ Բաղդասարի Բաղդասարյանի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղությունները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի 2026 թ. հունիսի 17-ի նիստում (արձանագրություն թիվ 5):

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԷԻՆ՝ Կառավարման ամբիոնի հիմնական աշխատակիցներ Վ. Խաչատրյանը՝ ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Թ. Մանասերյանը՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ա. Եղիկյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Պ. Սաֆարյանը՝ տնտեսագիտության թեկնածու, Գ. Չատինյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Խ. Փափազյան՝ տնտեսագիտության թեկնածու և այլք:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աղքատությունը բոլոր ժամանակներում համարվել է սոցիալական չարիք՝ խոչընդոտ հանդիսանալով ոչ միայն հասարակության զարգացման համար, այլև ձևավորելով սոցիալական լարվածություն և հիմնավոր դժգոհություններ հանրային շերտերում:

Ներկայումս աղքատության հաղթահարումը նույնպես արդիական սոցիալ-տնտեսական խնդիր է համարվում, քանի որ այն, թերևս, իր սրությամբ կամ ընդգծվածության տարբեր աստիճաններով դրսևորվում է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում: Աղքատության առկայությունն իր ազդեցությունն է թողնում հասարակական

տարբեր շերտերի համերաշխության, սոցիալական հավասարակշռման, սպառման վարքագծային դրսևորումների վրա: Աղքատ բնակչության առկայության հետևանքով որակյալ մարդկային կապիտալի ձևավորման գործընթացը դանդաղում է, իսկ աղքատությանը հարմարվելու մշակույթը խոչընդոտում է հասարակության լիարժեք զարգացումը: Եվ, ի վերջո, երկրում աղքատ ազգաբնակչության առկայությունը տնտեսական բեռ է հանրության համար, քանի որ պետությունը ստիպված բազմաբնույթ սոցիալական միջոցառումներ է իրականացնում և հսկայածավալ ռեսուրսներ ծախսում աղքատության կրճատման կամ դրա սրացումը կանխարգելելու ուղղությամբ:

Ավելին, աղքատ բնակչությանը հատուկ է անտարբերությունը հասարակության զարգացումների հանդեպ, քանի որ աղքատներին չեն հետաքրքրում քաղաքացիական հասարակության վարքագծային դրսևորումները, որակյալ կրթությունը, հանրային կառավարման գործընթացներում ներգրավվածությունն ու մասնակցությունը, որն էլ իր հերթին լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում հանրային կյանքի զարգացումներում:

Հետևաբար, աղքատության հաղթահարման գործընթացում էկոհամակարգային ռազմավարական մոտեցումների կիրառման անհրաժեշտություն է առաջանում: Աղքատության հաղթահարման համատեքստում պետք է իրենց ներդաշնակ գործունեությունը ծավալեն բոլոր շահառուները՝ ի դեմս պետության, գործարարության մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության կառույցների, ինչպես նաև աղքատ ազգաբնակչության ներկայացուցիչների, որոնց ընդհանուր շահերի իրագործումը աղքատության կրճատման գործընթացում ոչ միայն պետք է համակարգվեն, այլև ներդաշնակեցվեն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է հետազոտել և գիտական ուսումնասիրությունների արդյունքում հիմնավոր մոտեցումներ ներկայացնել՝ ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական ուղիները:

Ելնելով հետազոտության նպատակից՝ ատենախոսության խնդիրներն են.

- ✓ ուսումնասիրել աղքատության սոցիալ-տնտեսական բնույթը և դիտարկել աղքատության հաղթահարման գործընթացի նշանակությունն, ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերի տեսանկյունից,
- ✓ վերլուծել աղքատության հաղթահարման միջազգային առաջավոր փորձը և կատարել առաջարկություններ այն Հայաստանի Հանրապետությունում տեղայնացման ուղղություններով,
- ✓ շահառուների գործողությունների ներդաշանակեցման հենքով ներկայացնել աղքատության հաղթահարմանն ուղղված էկոհամակարգ՝ հաշվի առնելով նրանում ընդգրկված դերակատարների ռազմավարական գործողությունների ուղղությունները,
- ✓ մշակել Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի բարելավման ուղիներ,

- ✓ հիմնավորել աղքատության հաղթահարմանն ուղղված առաջընթացի առանցքային ցուցիչների կիրառման անհրաժեշտությունը ռազմավարական որոշումներում,
- ✓ մշակել առաջընթացի առանցքային ցուցիչներով աղքատության հաղթահարման ռազմավարական որոշումների կառուցակարգ,
- ✓ մշակել երկրում աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող համընդհանուր շղթայական ինդեքս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության գիտական նորույթն ամփոփված է հետևյալ հիմնական դրույթներում.

1. Մշակվել է աղքատության հաղթահարման էկոհամակարգային մոտեցում՝ հիմնված հանրային համերաշխության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հենքով ռազմավարության մասնակցային իրականացման վրա, որով համակարգվում են երկրում աղքատության կրճատման բոլոր շահառուների կառավարչական գործառույթները:
2. ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական կառավարման համատեքստում վերհանվել են առաջընթացի առանցքային ցուցիչների բովանդակային ու կառուցվածքային բնութագրիչները և մշակվել է աղքատության հաղթահարման գործողությունների արդյունքների չափելիություն ոչ միայն հետահայաց մոտեցումներով, այլև տեսանելի ապագային միտված գործողությունների նպատակադրումներով:
3. Աղքատության հաղթահարման առաջընթացի առանցքային ցուցիչների շրջանակի մշակմամբ ներկայացվել է աղքատության կրճատման կառավարչական որոշումների ընդունման կառուցակարգ՝ աղքատության կրճատման առաջընթացի ռազմավարական նպատակադրումները համեմատելով փաստացի ձեռքբերումների հետ և բացահայտելով աղքատության կանխարգելման ուղիների ուժեղ և թույլ կողմերը:
4. Մշակվել է երկրում աղքատության հաղթահարման առաջընթացը բնութագրող համընդհանուր շղթայական ինդեքս, որը, ի տարբերություն աղքատությունը չափող միջազգային ինդեքսների, լրացուցիչ հնարավորություն է ստեղծում վերլուծելու աղքատության կրճատմանն ուղղված գործողությունների արդյունքները և իրականացնելու աղքատության հաղթահարման գործոնային վերլուծություն՝ շահառուներին տրամադրելով ռազմավարական որոշումների ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը և կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Աղքատության հաղթահարման տեսամեթոդական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել են աղքատության էությունը, դրա տնտեսագիտական բովանդակությունն ու սոցիալական բնույթը, ինչպես նաև աղքատության կառավարման հիմնական մոտեցումները՝ դրանք քննարկելով ժամանակակից սոցիալ-տնտեսական զարգացումների համատեքստում: Աղքատությունը դիտարկվել է որպես բազմաչափ սոցիալ-տնտեսական հիմնախնդիր՝ պայմանավորված եկամուտների անհավասար բաշխմամբ, զբաղվածության սահմանափակումներով և ինստիտուցիոնալ գործոններով:

Ատենախոսության երկրորդ՝ **«Աղքատության արդի վիճակը և դրսևորման պատճառահետևանքային հիմքերը ՀՀ-ում»** գլխում վերլուծության են ենթարկվել աղքատության հիմնական ցուցանիշների շարժընթացը ՀՀ-ում, տարածքային տարբերությունները և դրա սոցիալ-տնտեսական դրսևորումները, ինչպես նաև գնահատվել են ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերը: Ուսումնասիրվել են նաև աղքատության միջազգային ինդեքսները: Միաժամանակ հիմնավորվել է, որ ՀՀ-ում աղքատության դրսևորման պատճառահետևանքային միտումները բազմավեկտոր են և առաջացնում են բազմաչափ գնահատման անհրաժեշտություն:

Ատենախոսության երրորդ՝ **«Աղքատության հիմնախնդրի լուծման հիմնական ուղղությունները ՀՀ-ում»** գլխում հեղինակը ներկայացրել է աղքատության հաղթահարման ռազմավարական քաղաքականության ձևավորման հիմնարար ուղղությունները և գործիքակազմը: Մասնավորապես, քննարկվել են աղքատության հաղթահարման էկոհամակարգի ձևավորման կառուցակարգերը և կարևորվել «վերևից» ու «ներքևից» աղքատության կրճատմանն ուղղված առանցքային ցուցիչների վերլուծությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը ՀՀ-ում աղքատության հաղթահարման ռազմավարական արդիական մոտեցումների մշակման ու ներդրման մեթոդական մոտեցումների, տեսական ու գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն է, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված երկրում աղքատության կրճատման նպատակադրումների և դրանց իրականացման ռազմավարական գործառույթների բարելավմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կիրառելի են ՀՀ մակրոտնտեսական կառավարման համակարգում՝ նպաստելով դրանց կառավարչական գործառույթների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև սոցիալական պատասխանատվության ինստիտուտի կայացմանը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կատարված հետազոտությունում դրական կողմերի հետ մեկտեղ առկա են նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Ատենախոսության 1.3 ենթագլխում ներկայացված են հիմնականում Եվրոպայի և զարգացած երկրների փորձը, մինչդեռ անհրաժեշտ էր անդրադառնալ այն երկրներին, որոնք ունեցել են Հայաստանի հետ զարգացման համադրելի մակարդակ, կարճ ժամանակում կարողացել են արձանագրել աղքատության հաղթահարման կամ առնվազն էական կրճատման/նվազման երևույթներ:
2. «Էկոհամակարգ» հասկացությունը չափազանց լայն իմաստով է օգտագործվում, թեև տրվում է դրա ընդհանուր նկարագրությունը, սակայն բացակայում է գիտական սահմանումը, տարբեր հեղինակների մոտեցումները և հեղինակի սահմանման առանձնահատկություններն ու տարբերություններն առկա մոտեցումներից: Անհրաժեշտ է շատ հստակ և ամբողջական սահմանել դրա տարրերը: Էկոհամակարգի բաղադրիչների (տնտեսական աճ, կրթություն, սոցիալական ծրագրեր) ընտրությունը բավարար չափով հիմնավորված չէ, ընտրության մեթոդաբանությունը նույնպես բացահայտված չէ:
3. Առաջընթացի առանցքային ցուցիչների (KPI) համակարգը չի կապվում Balanced Scorecard կամ ռազմավարական կառավարման այլ միջազգային մեթոդաբանությունների հետ: KPI-ների ներկայացումը կարևոր գիտական արդյունք է, սակայն դրանց միջև պատճառահետևանքային կապերի քարտեզը (Strategy Map), ռազմավարական նպատակների հետ համադրումը և կառավարման պարբերաշրջանում կիրառման կառուցակարգը բացակայում են, որի հետևանքով ցուցիչների համակարգը, որպես ամբողջական ռազմավարական կառավարման գործիքակազմ, լիարժեք չի ձևավորվում:
4. Ատենախոսությունում ռազմավարական կառավարման մատրիցաների և գործիքների կիրառման բացակայությունը որոշակիորեն սահմանափակում է աշխատանքի գիտագործնական արժեքը: Հաշվի առնելով, որ հետազոտությունը նվիրված է ռազմավարական կառավարմանը, նպատակահարմար կլիներ ներկայացնել առնվազն SWOT, TOWS, PESTEL, Stakeholder Matrix, Risk Matrix, Balanced Scorecard, ռազմավարական քարտեզ, ինչպես նաև գործողությունների իրականացման ճանապարհային քարտեզ (Roadmap) և Monitoring Framework: Նման գործիքների օգտագործումը հնարավորություն

կտար առաջարկվող մոտեցումները դարձնելու կառավարման պրակտիկայում անմիջականորեն կիրառելի:

5. Աղքատության հաղթահարման վերաբերյալ ներկայացված առաջարկություններում բավարար չափով չեն գնահատվել դրանց ֆինանսատնտեսական իրագործելիությունը և ազդեցությունը պետական բյուջեի վրա: Գործնական առաջարկությունները հիմնականում ունեն հայեցակարգային բնույթ, սակայն բացակայում են ծախսեր-արդյունք վերլուծությունները (Cost-Benefit Analysis), ֆինանսական ազդեցության գնահատման կամ սցենարային հաշվարկների ներկայացումները, ինչը կբարձրացներ առաջարկությունների կիրառական արժեքը:
6. Աշխատանքում օգտագործվում են մի շարք օտարալեզու տերմիններ, որոնց հայերեն համարժեքներն առկա են. իդեալական՝ կատարյալ, ցիկլ՝ պարբերաշրջան, ֆորմալ՝ ձևական, գլոբալ՝ համաշխարհային, դեմոկրատական՝ ժողովրդավարական, ինդեքս՝ համաթիվ և այլն: Աշխատանքը զերծ չէ նաև որոշ խմբագրական և տեխնիկական բնույթի թերություններից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված ատենախոսությունն առանձնանում է գիտական մշակվածությամբ, խորքային վերլուծությամբ և տրամաբանական կառուցվածքով: Հեղինակը հետևողականորեն և բարձր պատասխանատվությամբ է մոտեցել հետազոտության իրականացմանը՝ ապահովելով նյութի գիտականորեն հիմնավորված, տրամաբանական և ամբողջական շարադրանք: Աշխատանքում արտահայտված դիտողությունները բացառապես կառուցողական են և որևէ կերպ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը կամ դրա գործնական նշանակությունը՝ առավելապես ուղղված լինելով հետազոտության հետագա կատարելագործման հնարավոր ուղղությունների ընդգծմանը:

Գևորգ Բաղդասարի Բաղդասարյանի ատենախոսությունն ինքնուրույն, ամբողջական և համակարգային գիտական հետազոտություն է, որն ունի գիտա-գործնական նշանակություն: Աշխատանքի շրջանակում հեղինակն իր գիտական կարողություններով և մասնագիտական պատրաստվածությամբ անդրադարձել է աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղություններին՝ առաջարկելով տեսականորեն հիմնավորված և գործնականում կիրառելի լուծումներ:

Ատենախոսության գիտական արդյունքները ստացել են համապատասխան գիտական արժևորում՝ արտացոլվելով յոթ (7) գիտական հոդվածներում, ինչը վկայում է ներկայացված դրույթների նորույթի, արդիականության և գիտական հանրության կողմից դրանց ընդունված լինելու մասին: Ատենախոսության սեղմագիրը լիովին համահունչ է հիմնական աշխատանքի բովանդակությանը և ամբողջական կերպով արտացոլում է հետազոտության հիմնական գաղափարները, կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Հաշվի առնելով աշխատանքի բովանդակային ընդգրկումը, գիտամեթոդաբանական մշակվածությունը և ստացված արդյունքների տեսական ու կիրառական արժեքը՝ կարելի է վստահորեն եզրակացնել, որ Գևորգ Բաղդասարի Բաղդասարյանի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ուղղությունները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» 6-րդ և 7-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող գործող չափանիշներին:

Վերոհիշյալը լիարժեք հիմք է տալիս հանգելու այն եզրակացության, որ Գևորգ Բաղդասարի Բաղդասարյանն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 – «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Վ.Վ. Խաչատրյան

Գրախոսներ՝
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Վ.Վ. Խաչատրյան
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Գ.Գ. Չատինյան
տնտ. գիտ. թեկնածու՝ Խ.Ս. Փափազյան

Վ.Վ. Խաչատրյանի, Գ.Գ. Չատինյանի և Խ.Ս. Փափազյանյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,
հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Հ. Պողոսյան